«ՖՐԱՆՍ-ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ	ԿԱՆՈՆԱԿԱՐԳ ՄՈՒԼՏԻՄԵԴԻԱ ԼՍԱՐԱՆԻ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ

1. Սույն կանոնակարգը սահմանում է «Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՖՀՄՈՒԿ) մուլտիմեդիա լսարանի (այսուհետ՝ Լսարան) թվային սարքավորումների պատշաճ շահագործման կանոնները սովորողների և մանկավարժական անձնակազմի համար:

Առարկան

2. Լսարանի շահագործման նպատակն է իրականացնել բացառապես ուսումնական թվային ծրագրերի կիրառման միջոցով ինտերակտիվ ուսուցում սովորողների և մանկավարժական անձնակազմի (այսուհետ Օգտատեր) համար:
3. Լսարանում առկա է 13 համակարգիչ (14 մոնիտոր), որտեղ տեղադրված է **Ixilabo** ծրագիրը՝ նախատեսված ուսումնական նպատակների համար:
4. 12 համակարգիչները նախատեսված են սովորողների համար, իսկ 1 համակարգիչը երկու էկրանով՝ դասավանդողի համար:

Շահագործման պայմանները

5. Լսարանում առկա տեխնիկական ռեսուրսները նախատեսված են կիրառել բացառապես ուսումնական կենտրոնում ուսուցանվող կրթական ծրագրերին համապատասխան:
6. Ցանկացած այլ օգտագործում, առանց տնօրենի համաձայնության, խստորեն արգելվում է:
7. Լսարանի գործունեությունն ապահովում է հաստատության մանկավարժական անձնակազմը՝ դասախոսներ և արտադրական ուսուցման վարպետներ:
8. Լսարանի պատասխանատու է համարվում Ռեսուրս կենտրոնի և արտաքին կապերի գծով պատասխանատուն, որը համակարգում է Լսարանի բնականոն գործունեությունը:
9. Դասավանդողը պատասխանատվություն է կրում Լսարանում պատշաճ կերպով կազմակերպված դասի համար:
10. Լսարանը նախապատրաստում է դասավանդողը նախքան դասը սկսելը:

11. Նախապատրաստել նշանակում է միացնել համակարգիչները, գործարկել ծրագիրը:
12. Դասի ավարտին դասավանդողը անջատում է համակարգիչները, ստուգում տեխնիկական ռեսուրսների կարգավիճակը, դրանց անխափան աշխատանքը և ցանկացած խնդիր նկատելու դեպքում տեղեկացնում Ռեսուրս կենտրոնի և արտաքին կապերի գծով պատասխանատուին:
13. Լսարանի մուտք ու ելքի մասին գրառումը կատարվում է համապատասխան գրանցամատյանում ստորագրությամբ:

Սահմանված կանոնները

14. Օգտատերը պարտավոր է.

- չբացել, չձևափոխել ուրիշին պատկանող ֆայլերը, չփորձել մուտք գործել նրան պատկանող տեղեկատվության մեջ,
- չփոփոխել աշխատանքային կայանների կոնֆիգուրացիան,
- փոփոխության չենթարկել կամ չոչնչացնել ցանցային տվյալները,
- ինքնակամ չխափանել ծառայությունների գործունեությունը և, հատկապես, չներմուծել անվտանգությունը շրջանցող կամ վնասակար ծրագրեր (վիրուսային, լրտեսական կամ այլ ծրագրեր),
- խնամքով օգտագործել Լսարանի գույքը:

Համացանցի օգտագործման հատուկ կանոնները

15. Համացանցի օգտագործումը իրագործվում է բացառապես կրթական ծրագրերի շրջանակում.

- մուտքը համացանցին միշտ կատարվում է դասավանդողի ներկայությամբ և թույլտվությամբ,
- ուղիղ կապով միացումը երկխոսության ծառայություններին, քննարկումներին կամ սոցիալական ցանցերին սահմանափակվում է վերը սահմանված պայմաններով,
- չարտոնագրված էջերում ինքնակամ որոնումները (պոռնոգրաֆիկ, մարդատյաց, բռնություն, ռասիստական բնույթի...) խստիվ արգելվում է:
- Արգելվում է ներբեռնել ցանկացած ծրագիր:

Պատժամիջոցները

16. Սույն կանոնակարգով սահմանված կանոններին և պարտավորություններին չհետևող Օգտատերը կենթարկվի հետևյալ պատժամիջոցներին.

- ադմինիստրատորը կարող է կապն ընդհատել՝ աշխատանքային ժամանակահատվածը մանրամասն ստուգելու նպատակով, եթե կասկած ունի կանոնակարգի դրույթներին չհետևելու կապակցությամբ,
- սույն կանոնակարգով սահմանված կանոններին և պարտավորություններին չհետևող Օգտատերը կարող է ենթարկվել հաստատության ներքին կարգապահական կանոններով սահմանված պատժամիջոցների:

ՖՀՄՈՒԿ հիմնադրամի տնօրենի ԺՊ՝ Գոհար Գրիգորյան

«16» 12 2016 թ.